ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 5-րդ փողոցը (սկսվում է Արմեն Խոստիկյան փողոցից, հասնում՝ Շահամիրյանների փողոց) անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Մկրտիչ Սեդրակյանի անվամբ՝ «Մկրտիչ Սեդրակյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մկրտիչ Սեդրակյանը ծնվել է 1922 թվականի փետրվարի 7-ին, Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին):

1938-41թթ. սովորել է Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: 1941-45թթ. մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին: 1946-52թթ. սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1967թ.-ից դասավանդել է նույն ինստիտուտում (1986թ.-ից՝ պրոֆեսոր): 1952թ.-ից եղել է Հայաստանի նկարիչների միության անդամ: Եղել է բազմաժանր նկարիչ: Ստեղծել է պատմական, պատմահեղափոխական թեմաներով կոմպոզիցիաներ՝ «Քսանվեցը» (1956թ.), «Արևածագին» (1967թ.), «Գայ: Առջևում է Սիմբիրսկը» (1969թ.), «1915 թվական» (1960թ.), «Երևանի բերդի գրավումը» (1978թ.), «Դեր Զոր» (1979թ.), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (2003թ.), բնանկարներ՝ «Բջնի» (1965թ.), «Աշտարակի կիրճը» (1969թ.), «Սևան» (1999թ.), դիմանկարներ՝ «Ուսանող» (1967թ.), «Վարդանի դիմանկարը» (1967թ.), նատյուրմորտներ՝ «Հին աշխարհից» (1967թ.), «Նատյուրմորտ» (1968թ.) և այլն: Նրա կտավներին բնորոշ է կոմպոզիցիայի կառուցիկությունը, պատկերման հավաստիությունը: 1952թ.-ից մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: Նրա կտավները գտնվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Հայաստանի պատմության, հեղափոխության և այլ թանգարաններում: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում (1973թ., 2002թ.), Էջմիածնում (1973թ.), Սան Ֆրանցիսկոյում (2000թ.), Լոս Անջելեսում (2001թ.), Սան Խոսեում (2001թ.): Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: 1967թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր, 1985թ.՝ ժողովրդական նկարչի կոչման:

Մկրտիչ Սեդրակյանը մահացել է 2009թ. հուլիսի 1-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 5-րդ փողոցն

անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Մկրտիչ Սեդրակյանի անվամբ՝ «Մկրտիչ Սեդրակյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Մկրտիչ Սեդրակյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Մկրտիչ Սեդրակյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ